Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 335 - Ա
որոշման

«ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Մանուկների և հաշմանդամություն ունեցող երեխաների համար մատչելի խաղահրապարակների տեղադրում և վերանորոգում՝ համայնքային մանկապարտեզ-ների սաների սոցիալական պայմանները բարելավելու նպատակով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպություն, 6850 Քենդի պողոտա, սենյակ 102, Ռեսեդա, Կալիֆոռնիա 91355, Լոս Անջելես |
| 4. | Ծրագրի կատարողը | «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ, քաղաք Երևան, Վիկտոր Համբարձումյան փողոց 2 շենք, 37 բնակարան, ՀՎՀՀ՝ 00130776 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արմավիր բնակավայր, Արարատի մարզի Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայր, Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայր, Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան բնակավայր, Լոռու մարզի Վանաձոր համայնքի Վանաձոր բնակավայր, բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 3,154,000 դրամ |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արմավիր բնակավայրի մանկապարտեզ, Արարատի մարզի Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրի մանկապարտեզ, Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Տավուշի մարզի Դիլիջան համայնքի թիվ 5 մանկապարտեզ, Լոռու մարզի Վանաձոր համայնքի թիվ 5 մանկապարտեզ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2026 թվականի հունիսի 20-ից մինչև նոյեմբերի 25-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Խաղահրապարակների սարքավորումների տեղադրում և վերանորոգում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 20-ից մինչև նոյեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում՝ 3,154,000 դրամի չափով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Խաղահրապարակների սարքավորումների մատակարարման, տեղադրման և վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 3,154,000 դրամի չափով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցություն է նախատեսվում տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

05.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ